Պարույր Սևակ

Լեռնային գիշեր

Դաշույնաձև լեռներ, որ չեն խոցում սակայն,
Եվ անդունդներ, վիհեր՝ նման խորունկ վերքի,
Ու սլացիկ բարդի, ասես կանաչ մի կայմ,
Որ նավում է դեպի ծովածավալ երկինք:
Հետո՝ դեղին արտեր, հետո՝ արտեր թառած
Մեկ այս, մեկ այն սարի կարկատանված լանջին.
Հետո՝ լույս ու օջախ, կանանց ձեռքով վառած,
Որ տնովին նստեն իրիկնային հացի:
Հետո՝ մի պաղ լուսին, որ կախվում է ձորից՝
Վայր ընկնելու վախից ամբողջովին ճերմակ.
Եվ աստղազարդ գիշեր, և մի քամի, որից
Կտրին խշխշում է մի ծաղկաչիթ վերմակ...
Ու քնում է գյուղը վաստակաշատ քնով:
Միայն տակտ են տալիս կալսիչները կալի,
Եվ մի ջահել սիրո՞ւց, թե խմիչքից գինով,
Երգով երազում է «բարակ բոյով յարին»:
«Բարակ բոյով յարին», որ չի քնել գուցե
Եվ ծաղկաչիթ - նախշուն վերմակի տակ, կտրին,
Նվաղկոտ աչքերը երազանքով գոցել,
Վախենում է շարժվել - հանկարծ երգը կտրի...

16.VI.1951թ. 29.II.1952թ.

Երևան Մոսկվա